

[221942]



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

19 հունիսի 2017 թ.

N 3 – Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ «ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ» ԵՎ «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ՈՒՄ ԱՎԱՆԴԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ՈՐՊԵՍ ՆԱԽԿԻՆ ԽՍՀՄ ԽՆԱՅՔԱՆԿԻ ՀԽՍՀ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՄԻՆՉԵՎ 1993 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ը ՆԵՐԴՐՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N16-Ա/1 ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի 10-րդ բաժնի, 04 խմբի, 01 դասի «02. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ», 07 խմբի, 01 դասի «06. ՎՏԲ- Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում», 09 խմբի, 02 դասի «17. ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայություններ» և «19. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրերի (այսուհետ՝ Նպաստներ) գծով ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշմամբ որպես բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը ճանաչվելու հանգամանքով պայմանավորված՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի Նպաստներ ծրագրերի ֆինանսավորման իրականացման և հաշվետվությունների ներկայացման կարգը՝ համաձայն հավելված N1-ի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետին՝

1) լիազորել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի Նպաստներ ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) անվամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչությունում բացված գանձապետական հաշիվներից ֆինանսական գործարքներ կատարելու Ա և Բ կարգի ստորագրության իրավունք Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի և Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Զերմուկի համայնքապետարանների աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային մարմինների պաշտոնատար անձանց՝ համաձայն հավելված 2-ի:

2) Վճարման ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքել Նպաստները կանխիկ եղանակով վճարելու նպատակով ֆինանսավորում իրականացնելու մասին համապատասխան համաձայնագրեր:

3) հաստատել՝ բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող նպաստների նախահաշիվներն՝ ըստ սոցիալական աջակցության տարածքային մարմինների՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հուլիսի 23-ի N597-Ն հրամանով հաստատված N3 օրինակելի ձևի, ինչպես նաև Ծառայության անվամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչությունում բացված գանձապետական հաշիվներից ֆինանսական գործարքներ կատարելու սույն հրամանի N2 հավելվածում ներառված անձանց Ա և Բ կարգի ստորագրության նմուշները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի N900-Ն հրամանի N7 հավելվածի:

4) հաստատված բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող նպաստների նախահաշիվները և Ծառայության անվամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչությունում բացված գանձապետական հաշիվներից ֆինանսական գործարքներ կատարելու սույն հրամանի N2 հավելվածում ներառված անձանց Ա և Բ կարգի ստորագրության նմուշները տրամադրել նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչությանը՝ սոցիալական աջակցության տարածքային մարմիններին փոխանցելու նպատակով:

3. Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետին՝ սույն հրամանի հավելված 2-ով հաստատված ցուցակում ներառված անձանց

ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի 10-րդ բաժնի, 04 խմբի, 01 դասի «02. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ», 07 խմբի, 01 դասի «06. ՎՏԲ- Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում», 09 խմբի, 02 դասի «17. ՎՏԲ- Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայություններ» և «19. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրերով նախատեսված միջոցների շրջանակներում ֆինանսավորման իրականացման և հաշվետվությունների ներկայացման

1. «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ Նորք ՍԾՏԻԿ) որպես սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանների սպասարկման և շահագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված կազմակերպություն՝ մինչև տվյալ ամսվա 25-ը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչություն (այսուհետ՝ Նախարարության վարչություն) է ներկայացնում «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» և «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» (այսուհետ՝ Նպաստներ) ծրագրերի վճարման համար անհրաժեշտ միջոցների տվյալ ամսվա հայտերը՝ ըստ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Զերմուկի համայնքապետարանների աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային մարմինների (այսուհետ՝ տարածքային մարմին):

2. Նախարարության վարչությունը Նպաստների վճարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայտերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվի առնելով նախորդ ամսվա ընթացքում Նպաստների կատարված վճարումների վերաբերյալ «ՀայՓոստ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկանքները, ամփոփում և ֆինանսավորման նպատակով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ սոցիալական ապահովության պետական ծառայություն (Այսուհետ՝ Ծառայություն):

3. Ծառայությունը հայտերը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է ֆինանսավորման գործընթացը՝ ֆինանսական միջոցները փոխանցելով Ծառայության աշխատակազմի անվամբ բացված գանձապետական հաշիվներին (այսուհետ՝ Հաշիվ) ըստ տարածքների մարմինների հատկացնելու միջոցով:

4. Նպաստների գումարները հատկացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում տարածքային մարմինները ապահովում են ֆինանսավորման գործընթացը՝ ֆինանսական միջոցները վճարման ծառայություններ մատուցող կազմակերպությանը հատկացնելու միջոցով:

5. Նախարարության վարչությունը «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցված ծառայությունների (Նպաստների վճարումներ) կատարողականը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով Ծառայությանն է տրամադրում վերջինիս վերաբերյալ եզրակացություն:

6. Տարածքային մարմինները մինչև յուրաքանչյուր ամսվա 8-ը Նախարարության վարչությանն են ներկայացնում նախորդ ամսում Նպաստների գծով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից սահմանված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը»:

Ց ՈՒ Ց Ա Կ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացման ուղղված նպաստներ» և «ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների , որպես նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՍԱՏՄ-ներին սպասարկող գանձապետական բաժիններում բացված գանձապետական հաշիվներից ֆինանսական գործարքներ կատարելու համար լիազորվող ՍԱՏՄ-ների աշխատակիցների ստորագրությունների նմուշների հաստատման համար ներկայացված անձանց

ՄԱՐԶԸ	ՇՐՋԱՆԸ	Առաջին ստորագրություն		Երկրորդ ստորագրություն	
		պաշտոն	ա.ա.հ	պաշտոն	ա.ա.հ
ՄՐՄՈՒՄ	ԱՐԱՐԱՏ	պետի ժ/պ	Մարտիրոսյան Մկրտիչ Տարոնի	գլխ.մաս(գլխ.հաշ)	Համբարձումյան Գրիշա Մանուկի
	ԱՐՏԱՇԱՏ	պետ	Մարտիրոսյան Խորեն Աշոտի	գլխ.մաս(գլխ.հաշ)	Խաչատրյան Հասմիկ Նորիկի
	ՎԵԴԻ	պետ	Շիրինյան Դերենիկ Համազասպի	գլխ.մաս(գլխ.հաշ)	Հովհաննիսյան Արմեն Սերժիկի
	ՄԱՍԻՍ	պետ	Հովսեփյան Վարդան Գրիշայի	գլխ.մաս(գլխ.հաշ)	Ստեփանյան Նարինե Ժորայի
ՆՏԱԾՈՒՄ	ԱՇՏԱՐԱԿ	պետ	Շահագիզյան Կարեն Լիպարիտի	առաջատար մասն	Սարգսյան Դիանա Սուրենի
	ԱՊԱՐԱՆ	պետ	Սարգսյան Արամ Գուրգենի	գլխ. մասնագետ	Շահբազյան Հովհաննես Վոլոդիայի
	ԾԱՂԿԱՀՈՎԻՏ	պետ	Անտոնյան Նորայր Ֆելիքսի	գլխ. մասնագետ	Վարդանյան Ռազմիկ Վարազդատի
	ԹԱԼԻՆ	պետ	Ղազարյան Անդրանիկ Զորիկի	գլխ. մասնագետ	Ասատրյան Միեր Մխիթարի
ՍԻՄՈՒՄ	ԱՐՄԱՎԻՐ	պետ	Արտեմյան Ռուբեն Իշխանի	կրտս.մասնագետ	Վարդանյան Կարլեն Ազատի
	ՎԱՂԱՐՇԱՊԱՏ	պետի տեղակալ	Պողոսյան Լևոն Ժորայի	գլխ. մասնագետ	Գազազյան Արմենուհի Քերոբի
	ԲԱՂՐԱՄՅԱՆ	պետ	Խաչատրյան Սերոբ Հարությունի	գլխ. մասնագետ	Արմեն Ազատի Ալեքսանյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	ԳԱՎԱՌ	պետ	Ստեփանյան Արայիկ Ֆրունզիկի	բաժնի պետ	Աթեյան Խաժակ Ռաֆիկի
	ՍԵՎԱՆ	պետ	Պողոսյան Լևոն Ավետիքի	գլխ. մասնագետ	Նադարյան Արմենուհի Սարգսի
	ՎԱՐԴԵՆԻՍ	պետ	Հարությունյան Արամ Ռոբերտի	կրտս.մասնագետ	Կոլոտյան Լևոն Սերյոժայի
	ՃԱՄԲԱՐԱԿ	պետ	Հովհաննիսյան Ռիտա Իվանի	կրտս.մասնագետ	Սարգսյան Նաիրա Վահեի
	ՄԱՐՏՈՒՆԻ	պետ	Կարապետյան Աշոտ Կոլյայի	կրտս.մասնագետ	Գրիգորյան Անահիտ Վրեժի
ԼՍՄԻ	ԹՈՒՄԱՆՅԱՆ	պետ	Գևորգյան Արմեն Վիլենի	գլխ. մասնագետ	Իսոյան Գայանե Սենիկի
	ՏԱՇԻՐ	պետ	Գրիգորյան Արմեն Վլադիմիրի	առաջ.մասնագետ	Գրիգորյան Արմինե Ռաֆիկի
	ՎԱՆԱԶՈՐ	պետ	Գրիգորյան Կարեն Գրիգորի	պետի տեղակալ	Մկրտչյան Սամվել Սուրենի
	ՍՊԻՏԱԿ	պետ	Մաթոսյան Մացակ Հովհաննեսի	գլխ. մասնագետ	Մաթոսյան Կարեն Սամվելի
	ՍՏԵՓԱՆԱՎԱՆ	պետ	Ղարաքեշիշյան Ալբերտ Միքայելի	կրտս.մասնագետ	Ռևազյան Խալաթ Վոամի
ԿՍՏԱՅՔ	ԱԲՈՎՅԱՆ	պետ	Սարգսյան Զինավոր Արտոյի	առաջատար մասն	Ալոյան Սոս Վոլոդյայի
	ՀՐԱԶԴԱՆ	պետ	Ղազարյան Ստելլա Մելսիկի	առաջատար մասն	Սարգսյան Հասմիկ Դերենիկի
	ԶԱՐԵՆՅԱՎԱՆ	պետ	Կարապետյան Նորայր Պարույրի	գլխ. մասն-հաշվ.	Ափյան Անժելա Յուրիկի
	ԵՂՎԱՐԴ	պետ	Գևորգյան Լավրենտի Վոլոդյայի	գլխ. մասնագետ	Հովսեփյան Գագիկ Սերյոժայի
ԿՐԴԱԿ	ԱՐԹԻԿ	պետ	Մկրտչյան Մուշեղ Թորգոմի	կրտս.մասնագետ	Աղաբաբյան Արմինե Ֆրունզեյի
	ԱՄԱՍԻԱ	պետ	Խաչատրյան Վոլոդյա Մարտիրոսի	գլխ. մասնագետ	Ավետիսյան Գայանե Ժորայի
	ՄԱՐԱԼԻԿ	պետ	Հովհաննիսյան Հովհաննես Ռոբերտի	առաջ. մասնագետ	Նազարյան Ավետիք Արտուշի
	ԱՆՈՒՐՅԱՆ	պետ	Պետրոսյան Գագիկ Ստեփանի	գլխ. մասնագետ	Ստեփանյան Արամ Արտուշի
	ԱՇՈՅՔ	պետ	Մելիքյան Հովսեփ Արտավազդի	գլխ. մասնագետ	Առաքելյան Միշա Մերուժանի
	ԳՅՈՒՄՐԻ - 1	պետ	Եգորյան Արտաշես Ալբերտի	գլխ. մասնագետ	Ասլանյան Տիգրան Գրիգորի
	ԳՅՈՒՄՐԻ - 2	պետ	Բաղրամյան Էդվարդ Վարդանի	պետի տեղակալ	Միքայելյան Լուիտա Գրիշայի
ՍՅՈՒՆԻՔ	ԳՈՐԻՍ	պետ	Միքայելյան Արա Անդրանիկի	առաջ. մաս-հաշվ.	Մաշուրյան Անահիտ Վաղարշակի
	ԿԱՊԱՆ	պետ	Հովհաննիսյան Արամ Մարտունի	առաջ-հաշվապահ	Ալեքսանյան Նորա Վոլոդյայի
	ՄԵՂՐԻ	պետ	Կարապետյան Պավլիկ Գուրգենի	առաջ-հաշվապահ	Զաքարյան Գոհար Ֆրիցի
	ՍԻՍԻԱՆ	պետ	Իվանյան Կարեն Լորիկի	առաջ-հաշվապահ	Գրիգորյան Գևորգ Նիկոլայի
ՉԱՎՈՒՇ	ԴԻԼԻՋԱՆ	պետ	Դավթյան Սամվել Արծրունու	գլխ. մասնագետ	Մաթևոսյան Վարդան Շահենի
	ԻՋԵՎԱՆ	պետ	Մելքումյան Գագիկ Կամոյի	գլխ. մասնագետ	Պողոսյան Տիգրան Վազգենի
	ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ	պետ	Մուրադյան Մուշեղ Միշայի	գլխ. մասնագետ	Գիշյան Ռիփսիմե Սարգսի
	ԲԵՐԴ	պետ	Շառոյան Անդրանիկ Սպարտակի	գլխ. մասնագետ	Ադամյան Ալվարդ Աշոտի

ԳՍԵՄԻ ՁՄԵ	ՋԵՐՄՈՒԿ	պետ	Սաֆարյան Արա Պարույրի	հաշվապահ	Սարգսյան Աշխեն Դավիթի
	ՎԱՅՔ	պետ	Մարգարյան Արմեն Մաքսիմի	կրտս.մասնագետ	Ասլանյան Գոհար Մանուկի
	ԵՂԵԳՆԱՁՈՐ	պետ	Դավթյան Հրանտ Գվիտոնի	առաջատար մասն	Մկրտչյան Վարդիթեր Վարդգեսի
ԴՄԻԳՄԱ	ԱԶԱՓՆՅԱԿ	պետ	Չալաբյան Մերի Հրաչյայի	գլխ. մասն.-հաշվ	Սարգսյան Մարիամ Սարգսի
	ԱՎԱՆ	պետ	Հայրապետյան Լիլիթ Արամայիսի	կրտս.մասնագետ	Հովհաննիսյան Թագուհի Վարդգեսի
	ԱՐԱԲԿԻՐ	պետ	Նիկոյան Ադրինե Սմբատի	գլխ. մաս-հաշվ.	Հովհաննիսյան Անուշ Կառլենի
	ԴԱՎԻԹԱՇԵՆ	պետ	Ավետիսյան Գոհար Հակոբի	առաջատար մասն	Բաբախանյան Ծովինար Անդրանիկի
	ԷՐԵԲՈՒՆԻ	պետ	Ղուկասյան Վալենտինա Արամայիսի	կրտս.մասն. հաշվ.	Շտոյան Արմինե Գրիշայի
	ԿԵՆՏՐՈՆ	պետ	Արսենյան Սոնա Արամի	պետի տեղակալ	Բարսեղյան Սմբատ Արտուշի
	ՄԱԼԱԹԻԱ -	պետ	Գորգիսյան Ռուզաննա Ռոբերտի	գլխ. Մասնագետ	Շախբազյան Հասմիկ Սերյոժայի
	ՆՈՐ - ՆՈՐՔ	պետ	Ռաֆայելյան Ալինա Վաչիկի	առաջատար մասն	Խաչատրյան Սառա Սարգսի
	ՆՈՐՔ - ՄԱՐԱՇ	պետ	Բաբախանյան Սուսաննա Սերյոժայի	գլխ. հաշվապահ	Աթաբեկյան Անահիտ Հայկազի
	ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	պետ	Բալասանյան Արուսյակ Հարությունի	գլխ. մասնագետ	Խլոյան Սիրանուշ Հարությունի
	ՇԵՆԳԱՎԻԹ	պետ	Կոունկյան Ռուզաննա Գևորգի	գլխ. Մասնագետ	Դաղլարյան Մերի Ռազմիկի
	ՔԱՆԱՔԵՌ -	պետ	Ղուկասյան Գեղամ Ժորայի	առաջ-հաշվապահ	Հարությունովա Գոգարիկ Գեորգիի